

վանք մը՝ Հայոց երկրին ու վանքին վրայ, կանոնցին իրենց վանքը՝ Երևանաշնորհ Հեղին է Էսելմինիի անուան նուիրուած:

Համառոտեղով, ուրեմն, կ'ըսենք, թէ ԺՌԻ-ԺԵ զարոն, հաւանարար Վենետիկի ճամրով, Բատուա ևս եկած են Հայաստանէն արեւլի կրօնաւորներ<sup>1</sup>:

Վենետիկի Հասարակապետութեան՝ Արեւելք հետ վաճառականական յարաբերութիւնները, Բարսեղեանց Բատուա իջնելուն նպաստած պէտք են լինել, ասոնք, թէպէտև բազդատամբ իրենցմէ առաջ եղող և իրենց մամանակի կրօնաւորական կարգերով՝ աղքատ էին, սակայն անշոշալաւ լուս լուսուննելութիւն գտած պիտի ըլլան։ 1410ին կալուածահամարի ատեն՝ չորս արեղայ միայն կային. և զարմանային այն է որ Ս. Բարսղի կանոնն ունէին, ինչ ալ ուզենանց խորհիլ Ս. Բարսղի հօրօններու, և Բարսեղեան իրական կարգի մը զոյութեան մասին, ոչ միայն Արեւմաւոց՝ այլ նաև Արեւելքի մէջ<sup>2</sup>:

ԺԴ Պարու կիսուն տեղեկազրի մը ցանկին վրայ զրուած ծանօթութենէ մը կ'իմանանք, որ Բարսեղեանց վանքը՝ պէտք էր Ս. Մարկոսի կարդինալին իրը եկամուռ անցած ըլլար, որովճնառ այն վանքին հասոյթները՝ այլ ևս սոյն Ծիրանաւորին՝ կը պատկանին:

Հուակի, Հայոց եկեղեցոյն անուան՝ Ս. Մարիամէնի ի Ս. Բարսեղ փոփոխութեան նկատմամբ, կրնան մտածուիլ թէ ասիկա պարտինց Բատուայի մէջ հայոց երկրորդ անգամ բնակութեան մը նոր շրջանին, երբ առաջին անունը՝ Ս. Մարկամ, զորածութենէն զաղրած էր արդէն։

Տարօրինակ է Արևելցիներուն այդ կանոնաւոր կերպով Բատուա երևանալն, և միշտ «Ognissanti» թաղին մէջ, իրօք ալ Ս. Աստիային մինչև Ognissanti տարածուող

երկիրը՝ յունական հոս մ'ունի, Արքուկի Աստիա, Արքունի Եւփիմէ անտարակոյս թրւանդական, այսինքն՝ յունական ծագութեան ունեցող անուններ են։

Այսպէս, ուրեմն, երեք շրջան կ'ունենանք արեւելցիներու զաղմականութեան Բատուայի մէջ, մին կը տեէ մինչև կ զարը, և 601ին Աճելուլիփոսի ձեռքով տեղի ունեցած Բատուայի կործանմամբ կը փակուի, շրջան մը, յորում զիտենք թէ պահպան զինուորաց գունդ մը կար Բատուայի երկրորդ շրջանը՝ ԺՌԻ-ԺԵ զար, Երրորդը, վերջապէս, անցեալ զարու սկիզբէն մինչև մեր օրերը, երբ Միիթարեան Միարանութիւնը հաստատուելով Վենետիկի, վանատուան և երբեմն վարժարան ալ Կունենայ Բատուայի մէջ։

Հ. Գ. Ա.

## ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

### ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐՈՒ ՎՐԱՑ

(ԺՃ. ԺԷ. ԺԸ. և ԺԹ Դ-ր. Կ. Պուլ-)

(Ծար. տես բազմ. 1927, էջ 264)

Դ.

### ԺԸ Պար (1700-1800)

Այս ալ Տուափի Խաթունին մօքը տապանագիրն է։

- Խո իսկ եմ Կիւլպահար Կոշեցեալ Գարնան վարդ թէպէտ թասամեալ, ԶՏուփի գուստըն իմ կորուսեալ, Գոտի ասու անշունչ համրացեալ, Խոսեցեալ Կոյս օրիորդիս, Կակծմամբն այրեալ և գերելիս, Ոչ տեսի յառագաստ մտեալ, ԱԱլ փոփան արնեալ ի շիրմիս, Գուստը էի Տէր Օհանէսի, Կողակից

1. Տ. Բատուայի բույր պատմաբիւրն ու մամանակագիրը. իսկ Comin, և «Memorie Storiche» և, Հուակառած Grinzato - է, A 159, Առաջորդարան Բատուայի։

2. Moroni, անդ, և Համարի Շնուրով եղած ըլլայ

Հայերու Խուլեյ ամէն կողմ ծաւալման կերպոն։  
3. S. I. Parguire, անդ։  
4. S. Liber Beneficiorum Paduane Diocesis, Անգլաց յրուած ԺԶ տարու առաջին պրակի մը մէջ, Բատուայի Առաջնորդարանի գին Դիմանէն մէջ։

Արթոյն Գրիգորի,  
Առաւել սիրով իմ զստեր  
Քան ցաւը աստէն հնիր եկի:  
Ով ոք զիմ տապան տեսցէ  
Զիր վերջին այսպէս կարծենցէ  
Զոր խնդրեմ միով հայր մերիւ  
Ողորմիս հոգւոյն իմ տացէ: Ո՞՛Դ,  
մարտի ժէ.

Վաղամեն Ցուտի խաթունին ծնողըին  
գերեզմանաբարերն ալ թէն գեղեցիկ քան-  
ակներով զարդարուած են, սակայն Ցու-  
տիին զամբանին չեն հաւասարիր: Այս  
վերջնոյն աշ կողմը հօրը՝ Գրիգորին, իսկ  
ձախ կողմը մօրը՝ Լիւլպահարին տապանա-  
բարերը կը զտուին: Այս նահնեան գեր-  
գաստանին «Թաղ»ը մինչև այսօր անեղծ  
մնացած է:

Հետեւեալ տապանաբարը երեւելի Եր-  
բոն Ամիրայինն է (Զարրիանէ Սարրաֆի՝  
որուն յաջորդեց հայ հոռոմ Ապուչիսցի  
Բեղրաբի Ջէլէպին):

11. Այս որ եղեալ այս ի տապան.  
Զմեր մահուն տայ մեզ նշան:  
Որ թէ աղքատ թէ ընչական  
Այս է յիսին մեզ կայարան:  
Յա էր ազգաւ ազնվական.  
Ներենց կոչեալ Ակնա քաղքեան.  
Մահտեսի Ներենց այր պատվական  
Ցոյժ ողորմած և զթական:  
Էլից զիւան անցապան.  
Գնաց ի կեանք անվախան.  
Որոյ վասն ի անապահան:  
Ռաման կոչեցեալ մայսն է նշան  
Ցունիս ամսոյ շեւ էր քսան  
Երկու պակաս օր հնազարթեան:  
Որք հանդիպիք ի սոյն տապան  
Տուք զողորմին հայր մերական:

Ակնցի հայերու պատիւ բերող միա-  
կտուր, գեղակերտ զանգուածային տապա-  
նաբար մէջ Ծերոն Ամիրայինը. բոլորածն  
և կէս բոլորածն զարդարանդակուած.  
Հիանալի աշխատութիւն մը, համակ բար-  
ձրաբանդակ:

մէկ քարի վրայ:

12. Այս Զիշինայ Պետրոսն այս  
քոյրն սորա, նոր զարգացեալ

պայծառ դիմօք  
և կոյս տղա,  
չորիտասան  
ամաց էր սա,  
յորժամ ենաս  
մահն սըմա:  
Արդ ամփոփեալ  
կան երկորին,  
մարգարտատիպ  
ակունք անզին  
թողեալ լալով  
և կաթողին,  
զմայր իւրեանց  
հաճի իսկուհին:

Ահաւասիկ պատմութեան էջ մը շօշա-  
փող տապանագիր մը:

13. Այս է տապան Արե- և ի զիւղէն վրագետ-  
ւեցի, ցի,  
Գոտենն մնծի իւ- հոչակաւոր դանիէլի.  
խանի,  
Խանում անուն ան-  
նըմանին, որ մակ Աղանանայ  
կոչի:  
Կողակից որդւոյ որ ազուհան Պօղոս  
Շահնին, կոչի:  
Ի ժամանակս Նաւ- սա հարսնացաւ ըստ  
ողը Շահի, օրինի:  
Ի յաւերմանն Ազու- հանդերձ դստերըն ե-  
լիսի, ղեւ գերի:  
Ի գերութեան զօթն այրոն արի զսա ազա-  
ամ կեցեալ,  
Առ այս Բիւկանդ յատն ինն ամսոց եղեւ  
քաղաք բերեալ,  
Կան կ գերեկից գուս- բայսանն որ ինն ա-  
տր իւր, մնայ:  
Նորածին գուստրին որ էր տիօք երեք-  
Մարիամ,  
Որ յետ երից աւուրց հանգեալ լինին ի միա-  
սին:  
Եղեալ ի ծոց իւ- յաջ և յահեակ թա-  
րեանցն մօր, ղեալ դսախի:  
Խսկ մայր սոցին լու- ան քան էր գեղեցիկ  
սահոգի,  
Զերեն որ մինչ տե- կարծէք զտիա Արու-  
սանէր,  
Քսան քառակ կոյս հանգեալ լինի այս  
թիւ ըստ հսակի, կին քարի:  
Յերկոտասան հա- և մին ութեակ հայոց  
րիւրեկի,  
Եւ յահեանն ա- թուուրն ութերորդի  
պրիի,  
Որք հանդիպիք այսմ միաբերան տուք զո-  
շիրմի,  
հայր մեր որ երկինս ես.

$$1. \text{ Ռամ} = 1201 + 551 = 1752 \text{ Քրիստոսի թուական:}$$

Այս տապանագրին բռվերը ուրիշ վրաս-  
գեացիք (Վերինգեացիք) վախճանեալներու  
տապանները կը զոնուին որոնց վերոյիշեալ  
չհնաշեաւոր Դանիէլ մեծ իշխանին ան-  
կասկած շառափղէն են։ Ասոնց ալ հոս  
կ'ընդօրինակենք, ապագայ պրատումնե-  
րու օգտակար ըլլալու համար։

## 14. Այս է տապանս

Հանգստան  
որ է արէվէլեան  
ի գեղջէն արուլ  
եաց վերինգեացիք  
Դանիէլի որդի Ափր  
ահամին որ փոխցաւ  
իկեանս թվ ԱՄ Ապրիլի  
Ե

## 15. Այս է տապան ագ

ուլց վերինգեացիք լու։  
Ատեփանին որ փոխն  
յաւ առ Աստուած ի ԱՄ  
թվին Յունիսի  
Դի

## 16. Այս է տապան հա

նզստան վերին  
գէտցի Ազարի  
որդի Ավաքին  
ԹՎ ՌՃՁՅ

Գէորգ վարդապետ կ. Պոլսեցի Միւլէյիմ  
օղլուի տապանագրիը։

17. Է գետեկաւ յայսմ շիրմի,  
Գէորգէսու քաջ Ռաբունի,  
Միւլէյիմ օղլու յորչորչի,  
Էր քաղաքաւ Աստամոլցի։  
Պարագլուի վարդապետաց  
Ասել ըստ հայկականաց.  
Ունի տեղի արժան մտաց,  
Ոչ ըստ մարմնոյ պատույ փառաց,  
Որ ոչ ունէր ըստ արժանեաց  
Այլ ըստ ձրի աշխատանաց.  
Կման նախկին մեր թարգմանչաց  
Եկեղեցյոս հայաստանեաց;  
Էր սա զիտակ բազմաց լեզուաց  
Եւ զանգան մակցութեանց  
Հայոց, Տաճաց նաև Յունաց  
Ֆունզաց և Հաթիաց  
Լեզուաց գրոց հանգամանաց,  
Քաջ պարուեալ ի մէջ մտաց։

Յակեւորեալ ծեր հասակի,  
Յեթանասի եօթնում ամի,  
Որպէս հասեալ ցորեան բարի,  
Ժողովեցաւ ի յամբարի.  
Հայոց մեծաց թուականի,  
Հազար երկու հարիւր եօթնի,  
Կաւոյ յունվ. ամոյ Եի,  
Ցաւուր ծննդեան մերոյ փրկէի։  
Որ ճշմարիս գույն սակի,  
Էր ջատագով յամենայնի։  
Չորիւք ամօք ի մէջ բանտի.  
Երեսուն ամս ի յաբորի,  
Վասն մերոյ Սուրբ կրօնի,  
Ի լաթիաց ազգէն տանջի։  
Արդ ով դիացով յայսմ չիրմի  
Մի զանդաղիք տալ զողորմի

Արչափ պէսոց է երախտապարտ ըլլանց  
այս տապանագրաբերը յօրինողներուն ու-  
րոնց ոչ միայն զեղեցիկ ասութիւններ,  
«միտք բանի» ներ մեզ ձգած են, այլ նաև  
կենսազրական մեկին և յատակ զիմեր ար-  
ձանազրած են, որպէս զի մեռնողներուն  
յիշատակները չկորուփին։

Ջապանագիր Յովիանեն կորսա Բաղի-  
շեցի պատրիարքին (Ղալաթիոյ Սուրբ Լու-  
սաւորիչ Եկեղեցւոյ բակը թաղուած)։

18. Ասուն չնորհաց գանձ լուսաշաւիդ,  
Ամույն Յօսաննու վեհց շառաւիդ  
Կրօնիւք մասուր յԱմրտօս մարզեալ  
Ասու Բիւզանդիս գերազանց փայտէալ  
Նախագուշակմամբ գերնոյն տեսչութեամբ  
Որ և պատրիարք ազգեալ ընտրութեամբ  
Խիսեցեալ ի մեր սրբոյն Յակոբայ  
Նորին վճարեաց զպարտոն զերակայ  
Կիդրուկ կանոնաց բուրեաց բացցրաշունչ  
Որ յօխորտ հնէր բամից համաշունչ,  
Լցեալ սիրաբաղ ի յանին սրտի  
Որով կազդուրէր վէս ունեցողի  
Տնառն ի պատի վէմս այս ուղակի  
ի յորմա հաստեալ կայ ինքն առաջի  
ի ներ քսան և հնիգ ամաց  
պատրիարքութեան  
յամի Տեհուն 1742 գետ. 13  
ըստ հայոց ՌՃ՚Ն.

Վերի տապանագրիին սկզբնատառերը  
կը յօրինեն հետեւալ բառերը։  
«Մականուն կոլոտ»։

**Տապանագիր Յակոբ Նայեան Զմիւռնացի  
պատրիարքին:**

19. Այս տապան է գերանոշակ առն իմաստնոյ,  
Զրիական չորրհաց հոգւոյն տան և տեղոյ,  
Տեսոն Յակոբայ Աստուածաբան Կոչընիոյ,  
Եւ վեհափառ պատրիարքին Բիւզանդիոյ:  
Որ է յաջորդ Տն. Յօհաննու Բաղիքելոյ,  
Քաջարարոց Պատրիարքին գերարգելոյ:  
Լեալ Նեղինակ բազում գրիան մերոյ,  
Պայծառացաւ յոգիներախտիւք այրո յարգոյ,  
Բասներիք ամօք եկաց դէս այս Պօլսոյ,  
Տեղեաւ զոլով Զիմանցացի բարերարոյ:  
Ան որ ի կենան էք ճայն կենաց իր զփոյոյ,  
Ննչէ լոիկ լեալ արձանի յիման բարոյ:  
Հանգնաւ ի ԽՄՁԴԻ յուլիսի 19

**Ճամճու ողլու Յակոբ Պալրի (Թարգման  
Շուէտի գևապանատան) տապանաբարին  
Ընդորինակութիւնը:**

20. Եղեալ ի սոյն գերեզմանի.  
Բարեպայտօն առարինի  
Օրթագիւղի Եղազարի  
Ճամճի զատէ իմաստունի որդի,  
Որ թէքիման Ցափոր Կոչի  
Ելից զիեանն որ ի մարթի  
Եմուս ի հոյ մայր իւր....  
Հստ արարչն անսուս բանի  
Աստ ճանապարհ ամենայնի  
Թէ մնաստ թէ աղբատի  
որ է վիճու անդանալի  
Ուր հանդիպի յայս շիրմի  
ինձ ասացէք Տէր ողորմի  
թ. ԽՄՁԴԻ Խ.ի

**Տապանագիր Կաղզուանցի Պօղոս քա-  
հանայի (Կենսագիր և եղօրորդի Կաղ-  
զուանցի Զարարիա (ԽԸԸԸԸ) պատրիարքին)**  
և իր երեցկոնչ:

21. Տէր Պօղոսի քահա- Սոյն Տիրուէի երիցա-  
նայի կին  
Սծեալ մարթոյն շին ծրագրուխ խոհեմ  
րիմ հայի տիկին  
Զարարիայ Պատ լինեալ եկեալ յերկրէն  
րիարգի Կարին  
Եղօր որդի էք այս կալ աստ կամաւ կե-  
յարգի  
Որ նաև սա կաղ- Զի կենակից և ամու-  
զուանցի սին  
Զորմէ այսպան հա- Ննչէ ընդ առն ի միա-  
բեւանցի սին

Մինչ և այժմիկ յայս Եւ աղաչ տալ զողոր-  
արոտի մին

Սուրբ աղօթից ձեր իւր և հոգոց համայն  
կարստի  
Եկի զընալ  
և գուն երթալ  
ի թուին հայոց  
ԽՄԿԳին և գեկ  
տեմբերի Արին

22. Այս է տապան առն մեծի  
Գաղատացի Մուրատնայի  
ի մէջ ազգիս յոյժ անուանի  
Մոօք պայծառ և խելացի  
Մեծատուն էք ըստ Աշխարհի  
Պնձնալ բարւոք առատալի  
Բայց մեծութիւն յատ սորա  
Թուէր որպէս զալբն երկրի  
Հասեալ յարբունս հասակի  
Վաթուուն և շրս յամն կենի  
Վախճանեցաւ գրծոնքի բանեօք  
Թողեալ զայս կեանս ողորմելի  
Եղն վախճան սորա ի թիւն փրկչին  
1779ի հոկտեմբերի 9ի

23. Բնեկայ զիւղականս, Այրլ.  
պատուական, Զինաղ տոհմական,  
Քանանայական:  
Զարմ Տէր Միսաքեան,  
Ծնունդ Մըսըրեան, Մահ,  
տիսի Մկրտիչ խոհեմ  
զիտնական, Հասովանառ  
այս, յոյժ զթածական: Ելից  
զիեանս իւր, եղաւ ի տապան:  
Թվին ԽՄՁԴԻն Սեպտեմ. Գ.

Իր տապանին « Եիրմագիր »ը իր խոկ  
ձեռքովը՝ պատրաստողի մը տապանաբա-  
րին Ընդօրինակութիւնը:

24. Հայրապետը այս մահենսի,  
Որ ի բազմաց յոյժ զովելի  
Պապայեանըն Հայրապետի  
Մաւսեսոյն էք ազիթ որդի:  
Ընթերցասէ մշտավաստակ  
Եւ ծընողաց շատ հրպատակ  
Նորապըսակ և նոր հասակ  
Ժամանակում մահեն եղի ճարակ:  
Յառաջ քան զիւր մահրի անձին  
Ըզչիրմագիր իւր տապանին  
Զեռամբ իւրով ազդմամբ վերին  
Գրեաց զայս չորս տողը ներքին:

Ես յորմէ որ բատեղծայ  
Դարձեալ ահա առ այն եղծայ  
Ես հող էի և հող դարձայ  
Եղուկ հազար արագ եղծայ :

Տապան  
Աւագառն Ագ. մշ.  
Հայրաման  
ի թւ ականիս ՌՄլի  
ի Մայիսի 11

25. ՄԵԼԻՔ էի իմ հայրենին,  
ՅԱԳՈՎԻՔ գիւղ համբանին  
Բարերարող անդ ընակչին,  
Առ ի յօգուտ հասարակին.  
Ոչ ինայեաց յայս պատունին  
Ժանիք մահու օր խաւարին:  
Երեսնօրեայ ախաք հասակին  
ի հող դարձոյց զիս, ի հող երկրին  
Դն տեսանող իմ զիմակին  
Ցիշն զիմակ և քուն անձին.  
Եօթանասուն ամաց կենաք իմ  
Երազ թուին յայս շիրմին.  
Ոցաւոր է փառք մարդկային  
Մի փանար դու ի նոսին  
Անցաւոր է և վիշտ նորին  
Մի հեղզանար առ սէր օգտին

26. Յարութիւն գարդապեա Աբրայեան Վանաց  
Մազգեան տոնմին պսակ պարծանաց  
Մահարաւէր փողոյն բառքա  
Ազգուական.  
Խոց կարեզէր յիս նետաձիք  
Ասս մահական:  
Յնց ցուասիլ կենաց տնկոյս  
իմ բանական,  
Քատեալ մարմինս տապաստ էարէ  
Զիս յայս տապան:  
Քարոզասու զոլաք բանին  
Ճմարտութիսն.  
Տիրանուէր ուղույն անձուկ  
Հետեւութեան.  
Վարատութեամբ յայս վայր տեղի  
Տարագրութեան,  
Սպասեալ յուսոյ Տեսոն Արարշին  
Յօր զալըստեան:  
Փոխեցա առ Տէր ի հասակի և ամաց  
1797 ի սիստ. 17  
Տապան
27. Քաջատոնմիկ և բարեպաշտօն  
Աւագ առն Չամշեան Անտօնի

Բարձաւ հանճարեղն ի մէջ  
Քաղաքիս.  
Բարձաւ ազգասէրն ի մէջ  
մէր ազգիս.  
Վ արուք և բանիւք քաղցր քան  
զանունն.

Դժուարին ելից քաջ  
Խորհրդասուն  
Հմտութեամբ զրոց ինքնապարժ  
ներհուն,

Անյագ լսելեաց խօսք և բանք  
սորուն:  
Բայց վիճակ մարդկան երազ  
յողդողդուն.  
Կալաւ և զատ դառն օրհաս  
մահուն

ի թուին ՌՄլի  
ի փրկչին 1786 ի Մարտի 10  
ի հասակի ԿԴ

28. Այս է տապ  
ան հանգստութեան  
յԱրեւելեան տանէ  
Բարգուչատ զաւասէ  
Կէտրիխանցի Շահնազարի  
որդի զըռընձի պառն  
Ցոհաննէս Ալային որ էր  
անուանի ի դրուն արգու  
նական Մեծ Վարպետ որ  
փոխեցա ի կանս թվին  
ՌՄլ. Ապրիլի 6

Այս տապանագիրն ալ միջանկեալ կեր-  
պով հոս զետեղեցինց ցոյց տալու համար  
որ այս տեսակ արձանագրութիւնները ինչ  
լաւ զեր կընան կատարիլ պատմութիւնը  
անգիտակցօբէն խեղաթիւրողները ճամբու  
բերելու համար:

Թէսզիկի 1925 տարւոյն Ամէնուն Տա-  
րեցոյցը բացէք: Հոն՝ էջ Յջ7էն մինչեւ էջ  
363 պիտի զտնէք «Խըոընձի Շահնազար»  
զերզաստանին իրը թէ տոհմազգրութիւնը.  
Կարզանց միասին: «Իրենց ծագման մա-  
« սին երկու կարծիք կայ. մին այն է թէ  
« Պարաբազցի Մելիքը - Շահնազարներու  
« մէկ ճիշդն ըլլան. միւս ալ այն է թէ  
« Շահնազարն իրը մականուն նորիքա-  
« գործած են, բաղելով համանուն անձէ  
« մը որ անդրանիկ որդին էր Կայսերական

« Պալատան մէջ զառաջինն « Գորբոգծը — « Պաշը »ի պաշտօնին Կոչուող ՌԱԴԻՈՑԼ- « Լի ». (Էջ 358):

Այս յօդուածագիրը կը սկսի իր կիսաս- ցրականները, ներկայացնելով վերոյիշեալ Ասափայէն իր պառաջին պալատական հայ բեկարոյժը՝ Սուլթան Ալիմ Փի կոսրած թեւը լաւացուցած: Մինչդեռ մեր վերև զետեղած տապանագիրէն կը տեղեկանանց թէ Սուլթան Ալիմ Փի գահ բարձրանա- լէն (1789) ութը տարի առաջ վախճա- նած է « կէտքիսանցի Շահնազարի որդի դըմլինի պարոն Յոհաննէս Ալյայ որ էր անուանի ի դրունս արգունական Մեծ Վարպետ »:

Հետաքրքիր ընթերցողներու հաճոյը մը պատճառելու համար կը դնենք հոս Ար- քանի Պալատան թէկարոյժ Մեծ Վարպետ Յոհաննէս Ալյային զամբանին ասընթեր մի ուրիշ տապանագիրին ընդորինակու- թիւնը:

## 29. Ասո եղն թաղումըն

Լուսանոցի Մարիամ Խաթունին  
Էր կողակից խրըխնի խօսա ճանին  
Թզին հաջոց հազար երկու հարիսրին  
երսուն և եօթին սեպտեմբեր ամսին  
տասն և չորսին յաւուր հինգչարթին

Վերոյիշեալ տապանագարերուն միաձև Ըլլալը և գրերուն նոյնութիւնը մեզ ցոյց կու տան թէ սոյն վախճաննեաները միեւ- նոյն գերդաստանին կը պատկանին:

Այսպէս հայ բանասէրին, հայ հնասէ- րին անսպաս նիւթ կրնայ մատակարա- րել հին տապանագարերու ուսումնասի- րութիւնը. բայց մենք չարաշար չզոր- ծածելու համար « Բագրամիչպ »ի ասպնջա- կանութիւնը, վերջին մի տապանագիր կը զետեղներ ստորև, կը փակենք այսպէս 18րդ դարը և կ'անցնինք 19րդ դարաշը- ջանին:

## 30. Տապանագիր Զաքարիայ պատրիարքին

(Գույրու Զէլմէի Ենեղեցոյ բակը բաղուած)

Մեծ վարդապետ այս մեր ազգին գերահո- յակ և զգաստ,

Ծնեալ յերկրին կաղզպուանայ ութսուն- ամեայ հանգնաւ ասու:  
Ի Փառուեանց համսու զարմէն մաքրա- սնունդ բարեցասու  
Դեռ մահկութեան սուրբ հաւատով բնաւո- րեալ ճոխիմասու:  
Ըզսիրս հաւատն ուղաղաւան ետես ի սա սուրբ հոգին,  
Կոչեալ իսուրբ էջմիածին լուսակառոյց նոր յագին:

Արար ըզսա անդ միաբան վեճապետացն առ ոտին,  
Եւ փայլեցոյց գերափառօք զէս արուսեակ ասաւօտին:

Արբոյ գահոյս ժիր գործակալ միշտ ուր ու-

րեք յաջողակ.

Գեղեցկադէմ, ահազնածայն եպիսկոպոս շնորհուանկ

Էր ընախօս Աստուածաբան եկեալ Պօլոյ նուրիքակ

Լուսաւորչի դաւանութեամբ ուղիղ մտօք զաստիարակ

Ի գործ կրկնակ նուրիակութեան բարուոք ծանեան բարեկարգ

Զաքարիա արհիապաննօս եղին Պուսոյ Պատրիարք:

Հաչակիցաւ յոյժ ազգասէր և բարեհախտ գերաշարգ,

Նինևակ զօմանս եկեղեցիս և հիւանդաց եր- կու յարկ:

Ցոյժ ճոխացոյց շատ դպրատունս յորս հաս- տանաց վարժապիտ,

Հասոյց զօթնինկ եպիսկոպոս և զըրեսին վարդապետ:

Զանայր գուսումն նորիւ ազգիս նախնի սըր- բոյ յար հանգչսա,

Պահեաց հանգնստ զազ մեր տարւով քանի և վեց կացեալ դէտ:

Զէտ Սուրբ Սահակ կըզփայտ վշտաց հոգսս համար բարձեալ յուս:

Ցաւէն Պետի բուրդ հերձուածք բերանա- փակ տային խոյս:

Ազգմամբ հոգւոյն գիտաց իւր մահ ինդրեաց թագիլ շիրմի կոյս:

Ակն ուսնելով սուրբ ազօթից տամք ողբորմիս շնորհալոյս

Հանգնաւ յամի Տեասն ՌԱԴԻ Թուին և Մարտի ժկւ:

Ցեռնարկած ենք արդէն տապանաբա-

թերու վրայ յիշուած երեւելի անձնաւու-  
րութիւններուն կենսագրութիւնները պա-  
տրաստեւոււ:

Մահունան թուականները (տարի, ամիս,  
օր), նոյնաէս հորենական անունները ճշշ-  
դելու մասին՝ տապանագիրերը մեծ կա-  
րևորութիւն ունին:

Հոս տեղն է յիշել հայր Ալբաէն. Ղ. Ղա-  
զիկանի «Հայկական նոր» Մատենագի-  
տութիւն և հանրագիտարան հայ կեան-  
քի» դժբաղջարար Կիսատ մնացած հո-  
յակապ գործին ընձեռած ահազին օգոս-  
կարութիւնը, այս տեսակ աշխատափրու-  
թիւններով պարագոններուն համար:

Պէտք է յիշել նաև որ, շատ թիւ թուով  
«Թաղ» եր ամփոփ և անեղծ մնացած են  
Բանկալթի գերեզմանատան մէջ:

Լարդ մը տապանագարեր իրենց աեղե-  
րէն վերցուած և հեռաւոր անփիւններ նե-  
տուած են: Ղիս հոչակաւոր գերզաստան-  
ներու մասին ի գործ դրուած պրատոււ-  
ներու ժամանակ, կրնայ շփոթութիւննե-  
րու տեղի տալ, և մեծ զգուշութիւն կը  
պահանջէ:

Գ. Հասկը



## ՄԱՐԻԱ ՍՏԵԼԼԱ

### Ի ՄԱՐԻԱ ԹԻՒ ԹԻՒ

Ապրիլ անփոյթ ու խաղաղիկ օր առ օր.  
Նոր աշբեռով գետել իրերու շրու զի,  
Տերեկին որ կը թթիի միջնեւ աստղն  
Որ ծովէն գորս կ'ըլէ. փորիկ իրերէն  
Կաթեցնել ուրախութիւնն. աշխատիլ.  
Քան զրերու և մարդոց մէջ որսնել  
Զքնադ զիպուածը հանգուցի ըընութեան  
Ճամբաներուն մէջ բաց. ելեւ ըռնաւոր  
Ցիոնութեան լուծէն. ըլլալ մարգի մէջ  
Ֆիդ մը խոտի, առանց ոչ մէկ պատմութեան:  
Հարթ՝ մատչելի իմաստութիւնն է առի.  
Խոնարհներուն ամնահետ լաւութիւնն:

— Ապրիս, սկըսէ դուն:



### ԶՈՒ ԱՐԹՈՒՐԻ ԹԻՒ

Հին ուզիները որ կան  
Խոեւը մայր հկեղցույն,  
Ուր քարեռուն վըրայ խոտիկը կ'աճի,  
Կը տանին դէպ ի գիւղօրէն:  
Ուիին ցինադ անուններ.

Ճանապարհ եօթի օրիորդաց,  
Ուղի Լոյսի, ուղի Երգի, ճանապարհ

Մարտի, ուղի Հրեշտակներու,  
Արեւամուտ էր, տեսայ անցքը մի խումբ

Մանուկներու, կինորու  
Ուր քահանայ մ'ունէին  
Գլուխնին՝ ճերմակ ուբարով,

Կը տանէին փորիկ դագաղ մը դաշտի  
Դապիկներով ծակրւած,

Եւ կ'իխնին հովին՝ ուր էր գերեզմանն:  
Հարցուց՝ Ո՞ւր կ'երթաք դուք

Աղպէս զըւարիթ դէմքիրով:  
Տըրին Ժպուու պատասխան.

— Ե'երթանք մանկիկ մը թաղել —  
Եւ այօթինք մրմջելով՝ վարեցին

Իրենց ուղին յառաջ: Ինձ այն ժամանակ  
Երեւաց Մահը կերպարանք մը ազնի:

Խտոնած այս կանքին, ինչպէս այն երկինքն  
Ամառային կը խանըրէր հանդարտիկ

Չայներուն, պերճ բարտիններուն՝ զետակին  
Երկայնութեամբ, ճճէկով

Հոգէն իրենց արծաթթաթիկ ձեռուըններն:

### ՈՒ ՍՈՒ ՅՈՒ ՅՈՒ ՅՈՒ

Ղեւոնդ, եղբայր իմ, որ երէկ բացիր ինձ  
Ակետարանից կանայի հըրաչքով,

Գիտցիր, վրասն մրտածեցի, եւ զըսայ  
Նըշաններուն սուրբ՝ զօրութիւնը զանիուու:

«Նախ լաւ գինին կը արուի միշտ կոչունքին.  
Կը պարագէ խօլ գինովութիւնը փարչերին»:

Բայց հըմուտ սէրբ խօսեցաւ իր մօրկան,  
Եւ աղաշանքը շանցաւ զուր, ընդունայն:

Այսկան պարզերը աշխարհի հոչունքին  
Ունին յատակ ըմպելեար լի սափորներ:  
Եւր ճաշակութ՝ գինին կ'ըլլայ պլոտը, ժանու:

Բայց երբ յատակն հասած՝ գլշնիք մըրուրին,  
Պարապ սափորը ընենենք: Աւասիկ  
Կու զայ իր շինչ ծնոքով լցոնի զայն Փրիստու: